

ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Պոլիտիկայի համար	12 Ֆր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	8 "
Սոցիալական համար	15 "
Տարեկան	8 "
Վեցամսեայ	8 "

Ստատիստիկայի համար	3 Տր.
Տարեկան	4.50 "
Վեցամսեայ	1.50 "

Մասնագետ սուր արտաբերական համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 ստեփան Կ. երեքին առաջին անգամ համար 20 0/0 գեղյ կրչ

Վաճառքի համար ձեռքի 10 ստեփան

ՇԱՐՋՈՒՄ

ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐ ՏՄՐԱՎՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇՈՒՆԻՍ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեչ կոմպոզիտիւնս հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ) Պոլիտիկայի համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չին տրուի

ՇՈՒՆԻՍ Ի ՔԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՃԱՆԿՆԵՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵՐԻՎ ՎՃԱՐԻՆ



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՐԵՎԱ ՍԱՆՏՈՍԵԱՆ (Գ Ր Գ Օ)

Երեկ, առաւօտեան ժամը 6/40 ին, վերջացաւ Գրգոյի եռանդով լի եւ երիտասարդ կեանքը, շնորհիւ շարաքառարի գիւղացու ծի, որով առհասարակ, կարծես ընդհանրապէս խաղով, մահանում են երկաթե կապուածքով ու առողջութեամբ մարդիկ:

Գրգոն մահից չէր վախենում, նա արդէն Ամերիկայից ճանապարհ էր ընկել զէպի մահ. բայց նա գնում էր մեռնելու հայրենի հողի վրա, թուրքերի դէմ մղելիք ճակատամարտի մէջ: Ու դժբաղդը, անգուժ գիւղացու շնորհիւ, մեռաւ անկողնում պսակած, ժամերով ամբողջ մարմինը պարալիզէ եղած, բացի ուղեղից ու գիտակցութիւնից, և իր կողքին կանգնած ընկերոջ հառաչելով յայտարարելով— «ա՛մբ և ախտոս չէ՞ ինձ որ այսպէս եմ մեռնում, անկողնի մէջ»: Գրգոն, Արտաշէսի այս ընկերոջ, ինչպէս և Եգիպտացուն, վիճակ վեց անկողնում մեռնել չը նախելով որ սրանց շատ առիթներ էին պատահել խշնամու հետ ընդհարումներ ունենալ: Անգուժ է ճակատագիրը, այո, և շատ անգուժ...:

Գրգոն սնդիկի պէս շարժուն ու եռանդուն էր: Ու երբ ես տեսայ, արկածից յետոյ, նրա ամբողջ մարմինը անշարժ էր, բացի գլխից. ձեռք, ոտք, իրան փայտ էին կտրել. միայն վիզն էր շարժում: Նրա մարմնի մէջ ասեղ էին խոթում և խեղճը ցաւ չէր զգում: Եւ այդ անշարժութիւնը Գրգոն ստացաւ իր շափազանց եռանդից. նա լու

ղանալու գնալով, շափազանց քրտնած. լողարանի բարձրութիւնից մեծ թուփով ցատկում է ծովի մէջ ու յատակի ծանծաղու թեան պատճառով ցնցում է ոչնչաբար ուղեղը և տեղից շարժում կամ կոտորում վախ ողնեղից մին:

Նրան ծովի մէջ խեղդվելուց ազատում են հոն լողացող հայ երիտասարդներ. փայտ կտրած մարմինը ջրից հանելով և լողարան բարձրացնելով, Այնտեղից պատգարակի պէս մի բան չինելով Գրգոյին տեղափոխում են իր բնակարանը: Դէպքը պատահում է նախորդ օրվայ երկուշաբթի ժամի ու ժին: Ընկերները նոյն ժամից սկսած բժիշկներին ետեւից են վազում և մինչև ժամի 10ը չորս բժիշկներ են գալիս— Պոպով, Կամբիտիս, Արշինկով և Պարաշով. բոլոր բժիշկներն էլ հաստատում են ուղեղային ցնցում, և ողնի ֆլուսիւսը լինելը, ու մտտիկ ընկերներին, գուժում հիւանդութեան վտանգաւորութիւնը. ի հարկէ անհրաժեշտ դեղերը նշանակելով:

Մինչև առաւօտեան ժամի յորսը Գրգոն չէ կորցնում իր գիտակցութիւնը. չորսից յետոյ՝ հիւանդի վիճակը սկսում է վատ թարանւլ և ջերմութիւնը սաստկանալ. ընկերները վազում են Պարաշովի ետեւից, որի առաջին գործն է լինում հիւանդի տաքութեան աստիճանը հասկանալ և մաքրել բերնի մէջ հաւաքված փրփուրները, անշուշտ մեռնողի վերջին վայրկեանները անելի հանգիստ անցնել տալու համար:

Տաքութիւնը երեւակայածից աւելի է. բժիշկը վերցնում է ջերմ. չափը և շարած յայտարարում՝ 43 աստիճան տաքութիւն է. ինձ դեռ չէ պատահած որ այս աստիճան տաքութեան մէջ մարդ ապրի. զարմանալի առողջութիւն. տեսէք շնչառութիւնը արդէն դադարած է, բայց սիրտը դեռ գործում է. Ու այդպէս անշուշտ մարմնի մէջ սիրտը

տաս վայրկեան գործեց և դադարեց վերջնապէս...

Խօսեցինք Գրգոյի մահուան և նրա դէմ մաքառումի մասին: Այժմ խօսենք նրա ոչ երկարատեւ կեանքի մասին, որ բաւական բնաւոր է եղել հայրենի յի համար, և փոթորկնեցրով լի:

Գրգոն, բնիկ Տրապիզոնցի, իր ծնողներին հետ պատանի հասակում գաղթում է Պոլիս, այնտեղ սկսում է զբաղվել բրոզգրիով, և իբրև լաւ արհեստաւոր մօտ 7 հարիւր ոսկի դրամագում է կազմում: Մինչև դաշնակցական գործիչների Պոլիս գալը նա միշտ հետաքրքրվում է յեղափոփոխական գործերով, բայց չէ մտնում ու է կուսակցութեան մէջ: 94 թւականին նա տրդէն մօտիկ ծանօթացած դաշնակցութեան հետ որոշում է ամբողջովին գործին ներկայ, դադարում է իր արեւստով զբաղվելուց, մը առաջինով որ «երկու տէրանց» չէ կարող ծառայել, իր դրամագումը բաժնում է հետեւեալ կերպով. մի քանի հազար ֆրանք տալիս է ամուսնացած քրոջը, մի քանի հազար ֆր. օրիորդ քրոջը, ու իրեն պահած մասով ապրելով ամբողջովին նրա իրավում է յեղափոխութեան կազմելով դաշնակցական խմբեր, գառնալով ենթակոմիտէի անդամ որը կազմված էր Գրգոն, Արտաշէս Անգրէասեանի և Եգիպտացու նման հերոսներից:

Պոլսոյ Կ. կոմիտէն այդ այդ միջոցներով Գրգոյին ուղարկում է Ադրիանուպոլիս գաւաճան Սեօրոսի Կարկապոսի հաշիւները կարգադրելու. այդ տեղ մասնվում է նա, ձերբակալում և Պոլիս բերվում ու հինգ ամիս բանտը մը նախը յետոյ, յանցանքը շապարտուցվելու պատճառով, ազատ արձակվում:

Հնչակեանների Պապա Ալիի ցոյցի միջոցին մի քանի պուլկար և հայ ընկերներով, իբր հետաքրքիր գնում է ցոյցի վայրը. այդտեղ տեսնում է որ մի

կոմիտար, ոստիկանի հետ միասին, ատրճանակը պատրաստ բռնած մի հնչակեան պատանու ձեռքից բռնած տանում է. Գրգոն իսկոյն ատրճանակը հանում կոմիտարին և զինուորին տեղն ու տեղը սպանում և հայ պատանուն ազատելով ինքը անհետանում:

Իրանից յետոյ՝ Գրգոն մտնում է եկեղեցին ցուցարարների մօտ, Դաշնակցութեան յայտարարութիւնները ցրվելու և պատերին փակցնելու համար:

Յոյցը վերջանալուց յետոյ Գրգոն, վտանգված զգալով ինքզինքը, Պոլսից հեռանում է Բուլգարիա և մնալով մինչև 96 թւականի վերջերը կրկին մտնում է Պոլիս իր հաշով և իր ուխտով, ու այնտեղ կրկին մտնելով դաշնակցական մարմնի մէջ, մասնակցում է Բաբա Ալին օգը հանելու գաւազարութեան գործի պատրաստութեան որտեղի ունեցաւ 97 ին:

97 թւականի վերջերում նա կրկին ձերբակալվում է, կրկին ոչինչ չեն կարողանում հաստատել և քսոսում են իր ծննդավայրը՝ Տրապիզոն: Այստեղից նա փախչում է Եգիպտոս, վերջը Կովկաս և այնտեղ կրկին սկսում է իր արեւստով զբաղվել, գործի քնած տարիներում: Անհանգիստ Գրգոն թէեւ լաւ դրամ չահող, Կովկասում էլ երկար չէ գիմանում. նա կրկին հեռանում է Եգիպտոս, այնտեղից Ամերիկա: Այնտեղ հէնց առաջին օրերում իր արեւստի վերաբերեալ մի գործարան մտնելով՝ հէնց առաջին օրից սկսում է օրական 10 ֆրանկ ստանալ, խոստումով որ շուտով պէտք է այդ օրավարձը բարձրացվի: Հապիւ երկու ամիս այդպէս անցնելով, պայթում են Սասունի շարժումները: Ամերիկայի դօլարները չեն հրապուրում Գրգոյին և նա որոշում է վազել կուրի դաշտ: Սակայն անգուժ ճակատագիրը, ինչպէս ասեցինք վերի տողերում, Գրգոյին խնայեց իր բաղձացած մահով մեռնելու... ՎԱՐԿՕ

վարժարանները բացում չի կար... ձար չի կար, գործուած յիմարու...

Արևն կողմէ այ կետեւեալ ապտակը... Դուք օրէնքը անարգեցիք...

Այս մեր հոգաբարձութիւնը ստիպուեցաւ պաշտօնապէս կանչել օրիորդը վարժարան...

Եւ օրէնքը առաջին առթիւ յարգուած չըլ տուն համար ապարա...

Ահա՛ թէ ինչ — հայերու միւր մինչև թրքական շրջաններէն ծանուե...

«ՉԱՅԻՆԻՒԹԻ ԳԱՂԱՓՈՒՄ»

(Հնչիլնակ Միջին Վարսնիցեան, Երևան, 1904)

Բայց ինչպէ՞ս ընդունել որ նախկին դարերու մէջ կազմուած ազգութեանց...

Արդարեւ, մարդկային քաղաքակրթութեան սեմին վրայ երկու անձնա...

խոսքան չըջան մը և ինչ որ ամենէն գրիւտուն է — ազգային արժանապա...

Այս տակաւին Յիլիպէի ազատները տեսնելով զգալիակցութեան քարոհ...

Ըսինք թէ՛ Յիլիպէի թաղային վարժարանին մէջ, ներկայ ուսուցչական կազմը...

Մեր հակառակորդները լաւ են հասկցեր, որ վարժարանական խնդիրներէն շատ ու շատ աւելի գե...

Անհատի մը հացը ապահովելու համար, մեր Յիլիպէի եսախառտները

հոս մանրամասնութեանց մտնել, քանի որ իր անունով կատարուած սու...

Հայրենիքի գաղափարն ալ կոչուած է, իր կարգին, այդ շրջաններէն անցնելով...

ամբողջ համայնքի մը գերագոյն շահերը վտանգելու վիճակին հասցուցին գործը:

Թո՛ղ ողբան հիմա՛, եթէ գոնէ ողբալու զգացում ունին:

Իսկ ազգին շահերու անունով խօսող մեր հայ-թուրք թերթերը թող շարունակեն իրենց լուր թեան գա...

Բայց զգացող անհատները այլևս պէտք չէ՛ որ լռեն ինչ կուզեն թող կոկոսան առ աղտոտները:

Չարիքը սովորեալ ծառայած է, դարձան պէտք է, դարձան...

Եւ ատոր ես կ'անգրադատեմ յաջորդով:

Թղթակից

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարագա, Պարսկաստան, 5 յուն, 1904

Մեր ազգային խոշոր պահապանութիւններէն մինն էլ այն ցաւալի հանգամանքն է որ մենք հայերս չենք գնահատում...

խապաստական անցեալին և հնագոյն պատմութեան մէջ ազգերու գոյութիւնը յառաջանելու համար...

Միւս կողմէ, ազգայնական գաղափարները, ինչ ձեւի տակ ալ ըլլան միշտ յառաջ պիտի բերեն ազգայնական նախապաշարութիւնը...

Այսպէս է, մեր ըմբռնումով, «Հայրենիքի գաղափարին ապագան, իսկ ներկան» — Հոս հարցը կը փոխուի: Ինչպէս անկարելի է այսօր կեանքի բացարձակ վերացումը իրագործել, ու մարդ ստիպուած է կամայ սկամայ

ներ, վաղամտիկ յոյժ ողբացեալ նազար նազարեանը որ միջքանի տարի առաջ մեծամեծ եւ անգլխառեւ...

յարմարիլ պայմաններուն, կարգ մը անհրաժեշտ իրաւունքներ չի կորսնցնելու համար, այնպէս ալ, և ի հօգուտը...

(Շարունակելի)

Մ.

նաև Հայուհեաց բարեգործական ընկերութիւն տարիներ առաջ որ այնքան փառաւոր եւ օգտաւէտ դործունէութիւն է ցոյց տել երկար փամանակ. իսկ երկու տարի առաջ էլ նա իրա սեփական միջոցներով ստեղծել է Այսօրուան կրթական Փօնդը որ մեծ բարեքներ է խոստանում մարդայի նոր սերունդին եւ ապագայ հայութեան. այդ պեղե, իկ գործն էլ մեծ յաջողութիւն ունեցել է մինչեւ այժմ եւ ունի մտաւորապէս 4000 թուամանի (5000 ֆր.) կանխիկ գումարու իս որ հանրածանօթ մեծահարուստ Թուամանեան եղբարց մօտ 10 թ]0 տոկոսով շահու գրուած լինելով արդիւնքը յատկացուելու է մասնաւորապէս Մարաղացի հարեւուր որ հայ աղջիկները կրթութեան եւ դաստիարակութեան գործին որ այնքան կարեւոր է ու անհրաժեշտապէս հարկաւոր: Երբ այսօր մարաղացի հայը մոռանալով այսպիսի ժողովրդական բարօրութեան հոգեւոյժը ստիպւած մի ազնիւ երիտասարդին արդէն մատուցած բազմադիմի օգտակար ծառայութիւնները եւ անտես անելով նրա ապագայի համար տածած բարի նպատակներն ու բաղձանքները՝ ապերախութեամբ հալածում եւ անպատու է նրան անլուր եւ անսովոր զրպարտութիւններ տարածելով. նրա մասին իրը իէ նա աղգային փողերն կու տւած լինի, աղգային գրքեր եւ գոյքեր գրւած եւ իւրացրած լինի եւն. եւն. այդ պարագային ամեն ճշմարտ եւ ազնիւ մարդու պարտականութիւնն է իրա խղճի առաջ եւ հանդէպ ամբողջ ազգին հրապարակով յայտնել այն ինչ որ ուղիղ է եւ իրողութիւն եւ հէնց այդպիսի նկատուածներով է որ այս տողերը գրեցին պատական Շարժումի յարգելի խմբագրութեան ի գիտութիւն համայն ազգին ու ժողովրդեան. իսկ խօքս ուղղելով այդ յարգելի եւ համակրելի ազնիւ բայց հաւանեալ երիտասարդ գործիչին կտսեմ առայժմ, դուք ո՛վ ազգի հարազատ ու ներքեւ զաւակ որ այնքան խանդով ու եռանդով անպարէզ նետել էք գործելու, աշխատելու տիւ եւ գիշեր անդադրում թշուառ մարաղացու վերածնութեան, զարգացման եւ անաղիմութեանը համար մի՛ վատախօս, մի՛ յուսահատուիք բողոքովին, այլ շարունակեցէք ձեր անզնահատելի ազնիւ գործունէութիւնը քաջութեամբ եւ ձեր բոլոր թշնամիները պիտի նկուս եւ ամօթահար լինեն ի վերջոյ եւ յաղթանակը ձերն պիտի լինի մշտապէս:

Մի համակրող ընկ՛ր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սօֆիայի հայերը որ երկար ժամանակ հերոս Պետոն իրենց մէջը ունեցած, և անոր յիշատակը միշտ վառ պահած են, մեծ ցաւով կարգացին զՇարժումի թիւ 627 ի մէջ հրատարակուած բացատրութիւնը, որով Պ. Վարդօն յայտարարելով հանդերձ թէ Պետոնի գրութիւններն սպազրելու համար հանգանակուած գումարը 800 լէվի չէ հասած, և այդ գումարով անկ սրբի է գործի ձեռնարկել, պէտք կը ցուցնէ հրատարակման գործին կրկին յետա-

ձգման յարմար ժամանակի մը, մինչեւ որ հանգանակուած գումարը գոնէ 1200 ֆրանցի հասնի, նկատելով որ Պուլկարիոյ հայերը չ'պիտի զլանան վերջին ճիգով մը պակաս մնացած 4-500 ֆրանցի ջնջին գումարը հայթայթել և այսպիսով հերոսին յիշատակը իր գրութիւններուն հրատարակութեամբ յանդիմանել, նկատելով նոյնպէս որ Պ. Վարդօն որդի բազմակողմանի ծանր զբաղմունքները պատճառ պիտի լինին գործին շատ աւելի երկարացման, կառավարկեմ որ փոխանակ տպագրութեան գործը գեռ յետաձգելու և յարմար ժամանակը սպասելու, Պ. Վարդօն իրեն համար ընտրէ 2-3 օժանդակ ընկերներ և այսպէս կազմելով յանձնաժողով մը, գործին յարմար գատուած միջոցներով նոր զարկ մը տայ որ Պուլկարայւր իր սիրելի հերոսին մտային աշխատութիւնը պարունակող գիրքը մօտիկ ժամանակին իր ձեռքը կարենայ ունենայ:

Յարգանք
Թ. Յակոբեան
24 Յունիս 1904
Սօֆիա

ՀԱՆԿԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Սօֆիայէն գրուած նամակէ մը կիմանանք թէ տեղւոյն Հ. Յ. Պ. ենթակոմիտէն հան ի նպատակ Պաշնակցութեան հանգանակութիւն մը բացած է, գումարը արդէն 350 ֆրանքի հասած է և դեռ կը շարունակուի:

Յուսանք որ Սօֆիացիք, թէեւ թուով քիչ, պիտի աշխատին այդ գումարն մտքաքաղաքացիութեան գիրքին յարմար թիւի մը հասցնել:

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հօնտօնի հայասերներու միթիւնկին մէջ տրուած են կարելոր որոշումներ, որոնցմով կը պահանջուին մայիսեան ծրագրին իրագործումը, եւրոպական քօնթրօլով:

Անգլիական արտաքին գործոց նախարարը նամակով մը Յանձնաժողովին յայտարարած է թէ անգլիական կառավարութիւնը արդէն այդ ուղղութեամբ կը գործէ և տեղեակ է ֆրանսական նախարարին նոյն ոգիով զգացումներուն, որ և հրապարակուած անձամբ յայտարարած է:

Օրմտնեան պատրիարք հաղորդագիր մը ուղղած է Բ. Դրան, բողոքելով Բիթլիզի իշխանութեանց դէմ, որոնք հակառակ Սուլթանի խիստ հրամաններուն և կամքին բռնի միջոցներով կու պեն խաղաղութիւնը վերահաստատել. նաև պահանջած է որ իրեն ապատուութիւն տրուի հանգանակութիւն բանալ վերջին դէպքերու զօհուածներու այրիներու և օրբերու ի նպատ:

—Պոլսէն Վիէննա կը հաղորդեն թէ լուր տարածուած է ՔԲ Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա Հայաստանը բարենորոգելու համար նոր ծրագիր մը մշակելու բանակցութեանց մէջ են:

—Յունիս 21 Պոլսէն, պուլկար հեռագրական գործակալութիւնը հետեւեալը կը հաղորդէ.

Այն լուրը՝ թէ դեսպանները հայ կոմիտէէն սպառնական զբոսութիւններ ստացած են՝ սխալ է: Պետութեանց ստացուած գրութիւններուն մէջ միայն կը նկարագրեն Բիթլիզի մէջ պատահածները և կացութիւնը և կը խնդրեն արգիլել կրկնութիւնը 96 ի կոտորածներուն:

Ըստ թրքական աղբիւրներու Սասունցիներու իրենց տեղերը վերադառնալը զիջել վերջացած է. Դեռ ապստամբապետները կը փնտառին:

Հիւպատոսական հաղորդագրութեան մը համաձայն զինուորական և քաղաքական իշխանութեանց վարմունքը բարեփոխուած է շընորհիւ Պոլսէն եկած խիստ հրամաններու: Ըստ երեւոյթի թուրքերու և քիւրտերու զրգուածը հայերու հանդէպ մեղմացած է:

Վերջերս ոչ մէկ բռնութիւն կատարուած չէ. Ընդհանուր կացութեան բարեօրումը կամաց կամաց կը կատարուի: Բայց կացութեան ծանրութիւնը շատ հաւանական է որ գեռ երկար տեւէ:

—Պարսկաստանի հայ առաջնորդները Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին հեռագրած են որ թուրքերը բարբարոսաբար կը վարուին հայերուն հետ և խնդրած են անմեղները ազատել դահիճներու ձեռքէն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍՍԱ

Իշխան Սպօլէնսկիյ նշանակուած է Մինլաւտիոյ վառավարից. Ծարը ինքնաձեռագիր նամակ մը զրկելով նոր կառավարչին, կը յայտնէ որ Բօբրիքովին սպանութիւնը գործ մըն է, որուն մէջ մտո չունի ֆինլանտացի ժողովուրդը. պետական իշխանութեան առաջին պարտքը պիտի լըլայ հոգալ Մինլաւտիան աւելի մօտիկցնելու կայսրութեան, նոր կառավարիչը պէտք է որ ֆինլանտացիներու մէջ ամրացնէ այն համոզումը թէ՛ իր իրենց բախտը կապուած է ուս կայսրութեան հետ և տրուած հաստատութիւններու ապագան կախուած է խաղաղ գործելու յառաջադիմութիւնէն:

—Ռուս կառավարութիւնը երկու տարի շարունակ պատերազմելու պատրաստութիւններ կը տեսնայ:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պատերազմի գաշտէն ճիշտ և մեծ նշանակութիւն ունեցող լուրեր կը պակսին. ամէն օր իրարու հակասող լուրեր և հեռագրներ կերեւան եւրոպական թերթերու մէջ:

Միայն այսքան յայտնի և ըստոյց է, որ ճարտարներու պարտութիւններու մասին տարածուած լուրերը անհիմն են. ձարոնական նահանջումները զօրքերուն իրենց տեղերէն հեռանալը, ուղղութիւնին փոխելը, միշտ նպատակով կըլլան, աւելի զիւրութեամբ և ապահովութեամբ վերջնական նպատակին հասնելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՍԵՆՈՒՐԱՆԱՐԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՎԱՌՆԱՅԻ

Ընկերութեան էրգ. ընդհ. ժողովը որ պիտի գումարուէր յունիս 12ին՝ անդամաց մեծամասնութիւն չը գոյանալով յետագուեցաւ վաղուս յունիս 27 կէօրէն վերջ ժամը ճիշդ 2ին Ազգ. վարժարանի սրահին մէջ:

Ըստ արամագրութեան բնկերութեանս Թրգ. յօդուածին ներկայ եղող անդամներ մեծամասնութիւն պիտի կազմեն և պիտի ձեռնարկեն. Գործ. ժողովոյ հաշիւներ վաւերացնել և նոր Գործ. ժողովոյ ընտրութիւն կատարելու քացակայ եղող անդամներ վերջէն գիտողութիւններ ընելու իրաւունք չը պիտի ունենան:

Սուտի իրայոս ենք որ բնկերութեանս պատ. անդամներ ներկայս իրը հրաւիրագիր ընդունելով պիտի բարեհաճին որոշեալ ժառանգ ներկայ գտնուիլ և իրենց անդամական պարտականութիւն կատարել:

Մնամք Յարգանք
Ի դիմաց ընդհ. դիւանի

Ասենազպիւր Աւսենապետ
Արշ. Փայաքան և Գեորգեան (Կնիք)

ԱԶԴ

Սզգ. Երկսեռ վարժարանայ հոգաբարձութիւնը կուզայ ծանուցանել քաղաքիս պատ. հայ հասարակութեան թէ՛ վաղը կը բակի կէս օրէն վերջ ժամը 2ին տեղի պիտի ունենայ երկսեռ շակերտաց և աշակերտահաց վիճակացոյցներու բաշխման հանդէսը:

Ի Դիմաց հոգաբարձ, Վառնայի Երկսեռ վարժարանայ
Ասենապետ Ասենազպիւր
Փ. Հալաճեան Զգօն
Վառնա 26/9 1904

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Возможность“ Варна